ծանօթ. անում ես պլըշվէրիշ ամենայն օր եւ տեսնում ես մարդիկ բաղմազան: Ուզիմ գործ անել մեծ. պլմիշ անեմ փող կարեւոր, վասնզի էլ յոդնեցայ, առաջացեալ են տարիքս եւ ուզիմ նաեւ օղլշաղ առնել, բաղմացնելու համար ազգիս զաւակաց թիւը եւ հոգուս հանգստութեան համար:

— Մստր Ջօր մտածեց եւ ասեց. «Երբ մի քանի տարի առաջ գնացի ի Լոնդոն, ի Փարիզ եւ ի Բերլին, տեսայ որ անդ մարդիկ խիստ սիրեն կաքաւայք եւ մանաւանդ սիրեն պապագայք: Տեսայ նաեւ, որ փողոցներում ծախեն եւ ամէն ոք առեսցէ եւ ուտէ պտուղն զովահար որ ասեսցէն կօկօ: Մտածեցի, լաւ պլըշվէրիշ կարելի է անել. ասա, Հնդկաստան ունիմք կաքաւք բազում եւ կօկօյք բազում, որ կարելի է գնել աժան եւ անդ ծախել թանդ: Լսեցէք խորհուրդն իմ, առէք թռչնայք գունագեղ եւ առէք կօկօ, տարէք Եւրոպա: Լաւ, շահաւէտ գործ կը լինի»:

Հնդիկը մի վայրկեան կանգ է առնում: Նայում է, կարծես ուզում է պարապը չափել, յետոյ հառաչում է եւ քթի տակ նորից մրմըռում.

— Լաւ, շահաւէտ գործ կը լինի:

Շարունակում է.

— Լա՛ւ միտք է, ջուղապ տուի, լա՛ւ միտք է, մստր Ջօն. ուզիմ անել գործն այդ:

Այստեղ, յանկարծ, խօսակիցս սկսում է աթոռի վրայ անհանգիստ տրորուել, ձեռքերը շարժում է, յուզւում, ոգեւորւում:

— Ժողվեցի թռչնայք: Ի՞նչպիսի թռչնայք, ի՞նչպիսի թռչնայք:

Վեր է կենում, ման է գալիս. նորից նըստում է. բռնում է վերմակիս ծայրը, սեղմում:

— Թռչնա՞յք, ասում եմ: Պապագալներ՝ ամենայն տեսակի, ամենայն գոյնի: Ունէի կարմիր, դեղին, կանանչ. ունէի խառն՝ կտուցը ոսկի, պոչը երկայն ապրշումի թելերի նըման, բաց դեղին. կուրծքը՝ փերուզա, թեւերը՝ գարնանային տերեւի գոյն: Պղտիկներ, մեծեր: Կար մէկը՝ նայե՛ս, չէչտանաս: Նռան գոյն նոր հարսի հագած մախմար եւ խալեօֆ սեւ, աչքեր մեծ ու կրծքի վրայ, ի դեօշն, փոքրիկ ոսկետտուն: Եւ կայր ուրիշ մի — ա՜հ, մստր, ա՜հ, մստր — գլխի վրայ՝ վարդ գեռզալ, գիւղ հրաչապատկեր եւ թեւերը՝ փիլոն մութ կանանչ տէրտէրի, որ պատարագ մատոյց:

Վերմակս թափ է տալիս:

— Թռչնա՞յք, պապագա՞յք, ասում եմ: Եւ ուր՛իշ՝ ամենայն տեսակի, որ չգիտեմ ինչպէս ասին հայկազեան բարբառով, բայց որք՝ թամաշա էին աչուաց համար...

— Առիմ վանդակներ բազում եւ հինգ հարիւր կօկօյք՝ ընկուզն հնդկաց...

Որպէսզի աժան նստի ճամբորդութիւնը, բարեկամները խորհուրդ են տալիս վերցնել փոքրիկ իտալական նաւ:

— Ֆիֆթ արի՝ հաշուիս եկաւ: «Մանաւանդ, ասաւ մստր Ջօն, մանաւանդ որ նաւն այս, թէպէտ փոքր, բայց հասնի եւ աշխարհն հրաչակերտ, որ կոչուի Վենետիկ եւ ուր ապրին հայրք բաղմահմուտ, որ գրեցին բառարարն Հայկազեան եւ ուրիշ գրաբառ շատ գրքեր՝ հաստ եւ կաշիւ կազմած: Նրանք որ վառ են ազգի սիրով՝ մանաւանդ մէկը որ կոչեն Ալիշան՝ կարող են պլըշվէրիշ անել մեծամեծաց հետ, ծախել կաքաւունք իշխաններին, Պապին եւ թագաւորին այն երկրի եւ կըռուպի շատ ժողովել քեզի համար»: Այո՛, պատասխանեցի, մտածում եմ՝ ասածդ ճիշտ է. հայրք Վենետիկան ազգասէր են մեծ եւ հասկանան վաճառականութիւն... Գնացիմ ժամ, մի մոմ հաստ վառեցիմ, գրաբառ աղօթեցիմ, առիմ կուտ զանազան եւ պանջարք, դարսեցիմ վանդակների վերայ կամրջի եւ մեկնեցանք...

Մստր Մալքոմը, չափազանց յուզուած, դողացող ձեռքերով մի գլանիկ է վառում, աղմուկով ծուխը ներս քաշում եւ լռում:

— Ցետոյ ի՞նչ եղաւ,— հարցնում եմ, այլեւս բոլորովին հետաքրքրուած:

— Ցետոյ...

Բերանը բաց է անում, ծուխը մի վայրկեան պահում ու նորից, այս անգամ աւելի մեծ աղմուկով, ներս քաշում:

Լռում է:

— Մեկնեցի՞ք:

— Մեկնեցինք:

— Ցետո՞յ...

— Մտածում եմ, մստր, որ եթէ մեկնած

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան